


Երևանի պետական համալսարանի ռեկտոր,  
պետական գիտությունների դոկտոր



*[Handwritten Signature]* Հ.Հովհաննիսյան /  
17 հուլիսի 2024թ.

**ԿԱՐՇԻՔ**

**առաջատար կազմակերպության**

**Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)» թեմայով արենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի 11.07.2024թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 15):

Քննարկմանը մասնակցում էին «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Հակոբջանյանը, ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ. Սարգսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ի. Վարդանյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Ս. Սարիբեկյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ. Համբարձումյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Վ. Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ս.Ալեքսանյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Է. Միրզոյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Գալստյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Ն. Ասրյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Գ. Գյոզալյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Ա. Բարխուդարյանը, տ.գ.թ., ասիստենտ

Կ.Հ. Թումիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Ն.Յու. Կոստանյանը և ասիստենտ Ա.Ֆ. Մկրտչյանը:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի ներդրումային միջավայրի գրավչությունը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիրներից մեկը և դրա ուսումնասիրությունը միշտ արդիական է տարբեր ենթակառուցվածքների, տնտեսագետների և առանձին հետազոտողների համար:

Ներդրումները համարվում են երկրի տնտեսությունը սնուցող կարևոր աղբյուր, որոնք հնարավորություն են տալիս մեծացնել երկրի արտադրողականությունը, թարմացնել առկա աշխատանքային գործիքները, կատարել որակական փոփոխություններ տնտեսության տարբեր ոլորտներում և հատվածներում:

Բազմաթիվ գործոններ ունեն բազմակողմանի ազդեցություն երկրի ներդրումային միջավայրի վրա և դրանց բացահայտումն ու ուսումնասիրությունը առաջնային է դառնում: Ներդրումային միջավայրի վրա կարող են ազդել և՛ քանակական, և՛ որակական գործոններ և դա դարձնում է ներդրումային միջավայրի կանխատեսումը ավելի բարդ աշխատանք:

Վերը նշված հանգամանքներով, սույն ատենախոսության թեման կարելի է համարել արդիական, որը վեր է հանում ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատման անհրաժեշտությունը:

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական **նպատակն** է իրականացնել Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների համակարգում և գնահատել դրանց ազդեցության մակարդակները: Որպես ներդրումային միջավայրի չափորոշիչ առանձնացվել է ՀՀ ՕՈՒՆ-ների ծավալը: Ատենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

համակարգել և ուսումնասիրել ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնները,

- ուսումնասիրել տարբեր համաշխարհային կազմակերպությունների կողմից հաշվարկվող, ներդրումային միջավայրի գրավչությունը նկարագրող համաթվերը,
- հավաքագրել տվյալներ տարբեր աղբյուրներից, որոնք կարող են կիրառվել տնտեսամաթեմատիկական մոդելի գնահատման համար,
- գնահատել Փոքրագույն Քառակուսիների մեթոդով գծային ռեգրեսիոն մոդել, որը հնարավորություն կտա առաջնային տեղեկատվություն ստանալ ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների ազդեցության աստիճանների վերաբերյալ,
- իրականացնել Գրադիենտային էսթիման ալգորիթմի միջոցով համակարգված գործոնների ազդեցության կարևորության աստիճանների գնահատում,
- կատարել ՀՀ ՕՈՒՆ ծավալի կանխատեսում՝ կիրառելով ARIMA ժամանակային շարքերի կանխատեսման մոդելը:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ**

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդաբանական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես **գիտական նորույթ**՝ առանձնանում են հետևյալները.

- Մշակվել է ներդրումային միջավայրը գնահատող համաթվերի մեթոդաբանություն՝ վերհանելու ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող դրական և բացասական ոլորտները: Իրականացվել է երրորդ և չորրորդ մակարդակի ենթաոլորտների և բաժինների արդյունքների վերհանում: Բացահայտվել է, որ ՀՀ իրավական դաշտը առավել թույլ օղակն է ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության ապահովման համար՝ մասնավորապես դատական համակարգը և սեփականության իրավունքի պաշտպանությունը:

- Համակարգվել են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, որոնք առավել լայնամասշտաբ են՝ ընդհանուր թվով 37-ը: Իրականացվել է տվյալների շարքի արհեստական մեծացում էքսպոնենցիալ ինտերպոլյացիայի միջոցով: Ձևավորված մոդելի արդյունքում ստացվել է, որ ՀՀ ՕՈՒՆ ծավալի վրա քանակային ամենամեծ ազդությունը միավոր փոփոխության դեպքում ունի վերլուծությունների և զարգացման վրա ծախսերի (ՀՆԱ-ի մեջ) գործոնը, որը մեծանալով 0.22 տոկոսային կետից մինչ 1.22 տոկոսային կետ, կհանգեցնե՞ր ավել 121.7 մլն ԱՄՆ դոլարի ներդրման:
- Բացահայտվել է, որ ընտրված և կոռելյացիայի մատրիցայի թեստավորման փուլից հետո մնացած 10 գործոնների մեջ ամենամեծ կարևորությունը ունի կազմակերպությունների կշիռը բոլոր կազմակերպությունների մեջ, որոնք ներդրման համար օգտվում են բանկային համակարգից գործոնը, որի կարևորության աստիճանը ընդհանուրի մեջ կազմել է շուրջ 68.5 տոկոս:
- Կանխատեսվել է ՀՀ ՕՈՒՆ ծավալը մինչ 2027 թվականը՝ կիրառելով ARIMA և SARIMA ժամանակային շարքերի կանխատեսման մոդելները: Բացահայտվել է, որ եթե մինչ 2022 թվականի դեկտեմբերի դինամիկան մնա անփոփոխ, ապա 2027 թվականին ՀՀ ՕՈՒՆ ծավալը կկազմի 2.5 մլրդ ԱՄՆ դոլար:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն շարադրված է 117 մեքենագիր էջերի վրա:

Ատենախոսության **ներածությունում** սահմանվել են հետազոտական աշխատանքի արդիականությունը, ներկայացվել ատենախոսության շրջանակներում սահմանված խնդիրները, օբյեկտը, առարկան: Վեր են հանվել աշխատանքի արդյունքում ստացված գիտական 4 նորույթները:

Աշխատանքի առաջին՝ «**Ներդրումներ**» և «**ներդրումային միջավայր**» **հասկացությունների տնտեսագիտական հիմքերը**» գլխում տրվել են տարբեր տնտեսագետների, հետազոտողների կողմից ներդրումային միջավայրին

վերաբերող կատարված աշխատանքներում ներկայացված սահմանումներ, հասկացություններ, ներդրումային գործունեությանը վերաբերող փուլերի ուսումնասիրություններ, հավաքագրված գործոնների համակարգումներ և այլն:

Աշխատանքի երկրորդ՝ **«Ներդրումային միջավայրը կարգավորող ցուցանիշների վերլուծություն»** գլխի առաջին բաժնում ներկայացվում է ՀՀ օտարերկրյա ներդրումների դինամիկան տարբեր տեսանկյուններից՝ սկզբնաղբյուրների, ըստ ոլորտների: Ինչպես նաև ներկայացվել են համեմատություններ այլ երկրների հետ:

Երկրորդ բաժնում հավաքագրվել և ուսումնասիրվել են տարբեր համաշխարհային կազմակերպությունների կողմից ստեղծված համաթվեր, որոնց օգնությամբ վեր են հանվել ներդրումային միջավայրի վրա դրական և բացասական ազդեցություններ ունեցող ոլորտները:

Աշխատանքի երրորդ՝ **«ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատումը»** գլխում կատարվել են ռեգրեսիոն մոդելների գնահատում՝ վերհանելու քանակային և կարևորության ամենամեծ ազդեցություն ունեցող գործոնները: Կատարվել է ՕՈՒՆ ծավալի ժամանակային շարքի կանխատեսում մինչ 2027 թվականը: **«Եզրակացություններ»** բաժնում համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրահանգումները:

## **ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից հիմնականներն են.

1. Աշխատանքում գիտական նորույթի ներկայացված թվով 4 արդյունքները բխեցվել են հեղինակի կողմից աշխատության 3-րդ գլխում կատարված տնտեսամաթեմատիկական մեթոդների կիրառման արդյունքներից: Ը.00.02-Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, անհրաժեշտ էր նախանշել ստացված արդյունքների կիրառության ուղղությունները համապատասխան ռազմավարության,

քաղաքականության, գործիքակազմի և կառուցակարգերի մշակման ու ներդրման միջոցով:

2. Գլոբալ զեկույցների և համաթվերի շրջանակում հեղինակը չի անդրադարձել «Գլոբալ ինովացիոն ինդեքս»-ի համաթվին ինչը ևս կապվում է բարենպաստ գործարար միջավայրի հետ և մասամբ փոխարինում է Գլոբալ մրցունակության զեկույցին:
3. Աշխատանքի 1.2 ենթագլխում նշվում է, որ բարենպաստ ներդրումային միջավայրը խրախուսում է նորարարությունների ներդրմանը կազմակերպություններում: Ցանկալի կիներ, որ հեղինակի կողմից վերլուծության համար ընտրված գործոններում սա ևս ընգրկվեր (օրինակ ՀՀ կազմակերպությունների կողմից նորարարությանը ուղղվող ծախսումների մակարդակը):
4. Անհրաժեշտ էր հիմնավորել, թե ի՞նչ չափանիշներով են ընտրել 37 գործոնները որպես անկախ փոփոխականներ՝ ներդրումային միջավայրի տնտեսամաթեմատիկական գնահատման համար:
5. ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների ընտրության նպատակով կիրառված կոռելյացիոն մատրիցը հնարավորություն է տալիս գնահատել գծային կոռելյացիոն կապը փոփոխականների յուրաքանչյուր զույգի միջև, բայց չի դիտարկում ռեգրեսիայի մոդելի բոլոր բացատրող փոփոխականները միաժամանակ: Կարծում ենք, գործոնների ընտրության համար ավելի նպատակահարմար էր բազմագործոն գծային ռեգրեսիայի մոդելում կիրառել Forward-Backward մեթոդը:  
Էջ 106-ում նշվում է. «Ավտոկոռելյացիայի և մասնակի ավտոկոռելյացիայի արդյունքներից կարելի է հասկանալ, որ ժամանակային շարքերում առկա չէ կապվածություն նախորդ լագերից», մինչդեռ գծապատկեր 25-ում մասնակի ավտոկոռելյացիայի ֆունկցիայի 1-ին և 2-րդ լագերում առկա են նշանակալի կոռելյացիայի գործակիցներ: Էջ 107-ում AIC-ի նվազագույն արժեք ունի 2-րդ մոդելը: Ցանկալի է մեկնաբանել 1-ին մոդելի ընտրությունը:
6. Աշխատանքում առկա են խմբագրական բնույթի սխալներ: Նախ, էջ 84-ի աղյուսակ 8-ում «Սոցիալական գործոնային խումբը գրված է երկու անգամ և

Ռազմական ծախսերը ՀՆԱ-ի մեջ» ներառված է սոցիալական գործոնային խմբում: Երկրորդ, էջ 85-ում «Կոռեյացիոն մատրիցի գնահատականները ընկնում են [-1,1] միջակայքում և որքան մոտ են ցուցանիշները միջակայքի եզրերին, այնքան ավելի լավ և կարելի է տվյալ գործոնը ներառել վերլուծության համար: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև նշանին...» նախադասություններից տպավորություն է ստեղծվում, որ խոսքը կոռեյացիայի գործակցի նշանի մասին է: Պետք է գրվի. «Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ռեգրեսիայի մոդելի գնահատված գործակցի նշանին»: Էջ 88-ում գրված է. «Գնահատվել են երկու ռեգրեսիոն մոդելներ..., որոնցից մեկում կախյալ փոփոխական է հանդիսացել Հայաստանի Հանրապետությունում ներդրումների ծավալը, իսկ մյուսում ներդրումների ծավալի աճը», մինչդեռ էջ 83-ում՝ «Ընդհանուր առմամբ հավաքագրվել են 37 գործոններ ... և 2 գործոն՝ օտարերկրյա ներդրումների ծավալ և օտարերկրյա ներդրումների ծավալի տարեկան աճ, որոնք երկու տարբեր ռեգրեսիոն մոդելներում ներկայացվել են որպես կախյալ փոփոխականներ»: Էջ 108-ում պետք գրվի. «Ljung-Box-ի համաթիվը 0.05 է: Դա նշանակում է, որ կարող ենք մերժել զրոյական հիփոթեզը, ըստ որի ժամանակային շարքի մնացորդները ավտոկոռելացված են»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտությունների ընթացքում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և արտացոլում հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները:


Այսպիսով՝ Գևորգ Սուրենի Պետրոսյանի «Ներդրումային միջավայրի էնդոգեն և էկզոգեն գործոնների գնահատում (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը

համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի

«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,

տ.գ.թ., դոցենտ՝




Ա. Հ. Հակոբջանյան

Գրախոսներ՝

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի

«Կառավարման և գործարարության» ամբիոնի ասիստենտ,

տ.գ.թ.՝



Տ. Ս. Վարազդատյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի

«Կառավարման և գործարարության» ամբիոնի ասիստենտ,

տ.գ.թ.՝




Ն. Յու. Կոստանյան

Ա.Հ. Հակոբջանյանի, Տ.Ս. Վարազդատյանի, Ն.Յու. Կոստանյանի

ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Ն.Յու. Կոստանյանի

Մ. Վ. Հովհաննիսյան